

Գերապատութեան՝ փութով ճամբար ելլելիր պաշ-  
տօնատեղին ուղիւրելու համար։

— Աղջմամարայ վանքին մէջ հաստատուած որ-  
պանոցը, տարւոց սկիզբէն, Մոսկուայ բնակող բա-  
րեգործ ազգայնի մը պաշտպանութեան ներքև զը-  
րուած է, որ ամսական 12  $\frac{1}{2}$  օսմ ոսկի սահմա-  
նած է անոր ծախք երուն համար:

—Երեք տարի Առաջ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը Հայր իր անձնական ծախքով գրադարաններ շնորհ տալով Խրուսաղէմի Վանուց Ս. Յորոս և կեղծուոյն մէջ, հօն փոխադրել տուաւ Ս. Աթոռոցն 2,000ի մօտ գրչագիր մատեաններն, որոց այժմ ընդգրածակ յուցակը կպատրաստէ լուսարարապետ և գրապետ Տ. Սահակ Եպիսկոպոս Խապայեան: Գովիլի նպատակաւ այս միջոցին ալ յիշեալ եկեղեցոյն կից երկու պատմական սենեակներ միացուելով գրատան վերածուեցան, ուր պիտի փոխադրուին բոլոր տպագրեալ գրեր, և հաւանականարար Զատկական Տօններէն յետոյ մեր գրատուններն որոշեալ ժամերուն կանոնաւորապէս պիտի բացուին Միարանութեան առջև, ուր մեր ուսումնատենչ եղբայրակիցներն յաճախիելով՝ գրապետ Սրբազնի կամ իւր օգնականին հսկողութեան տակ հետամուտ պիտի լինին իրենց մտաւորական զարգացման: —Այս առթիւ յիշենք թէ Ս. քաջարքիս Քրանչիսկեան, Դոմինիկեան և Օգոստինեան միարանութեանց Ճոխ գրատունները ոչ թէ միայն իրենց միարանակիցներուն, այլ և օտարաց առջև քայ են որոշեալ ժամերուն, միայն թէ այս վերջիներուն ներելի չէ զրատունէն գիրք դուրս հանել:

ԱՐԵՎԱԿԱՆ ՀԱՅՔ

Նրանքից չայց հովի Գեղ, Գէորգ Խափսկո-  
պոսի շրջաբերական թուղթը

ԱՐ ԱՐԺ, ԵՐԻՑՈՒՆՈՒ, ՊԱՏ, ՀՈԴՈՒԵՐՉՈՒԹԵՒ-  
ԿՈՒ ԵՒ ԱԶԴԵՒԻ ԺՈՂՈՎՈՒՄՐՈՒ ՀՈՅՈՑ  
ՈՒՄԸՆԵՈՑ.

Վեհափառ Հայրապետուն Ազգիս Տ. Տ.  
ՄԿՐՏԻՉ Սրբազնազյն Կաթուղիկոսն ամե-  
նայն Հայոց վափառելով որ Եւրոպից մէջ  
ցրուեալ իւր հօտն ունենաց մի եպիսկոպոս  
հրաւերեց զմեզ Մարտէլից ի Ս. Էջմիածին և  
իւր Բարձր վառաշխաթեան արժանի համարե-  
լով զմեզ ձեռնազրեց եպիսկոպոս ի վերաց հա-  
յոց Եւրոպից ի թիւս որոց համարելով նուի

զի՞օմանահայս՝ իւրեանց միջավայրի և այլ  
յարմարութեամբը:

Իրաւ է թէ կ, Պօլսոյ Ազգ. Պատրիարքարանի կողմէ 10—20 տարին մի անգամ Եպիսկոպոս մը կացելէր ի Ռոմանիա և կանցնելու կերպարու բայց Վեհ Հայոթիկն ուղելով առելի օգտակար ընել Ռոմանահայոցդ համար հոգուածան այս գրութիւնը՝ հրամացեց որ նախ Աւատրո—Հունգարիայէն և Ռոմանիայէն սկսիմք մեր այցելութիւններն և այսուհետեւ ալ մէկ կամ երկու տարին անգամ մը այցելեմք և Պատ. Հոգաբարձութեանց հետ համերաշխ սիրով աշխատիմք ի փառս ս. Եկեղեցւոյ:

Ռւսոսի Փարիզի Օսմանեան գեապանա-  
տունէն մեզ տրուած անցազիին վրայ կատա-  
րուելով ամեն օրինական գործողութիւնքը  
մտանք ի Ռիօմանիա, և Պօթօշանի ու Ետշի  
եկեղեցեաց մէջ մխիթարեցինք մեր բարեպաշտ  
ժողովուրդը և օրէնութիւններ կարդացինք  
Ռիօմանիոյ թագաւորութեան և ժողովրդեան  
Համար:

Այս ինչ պատրաստուած էինք Եաշեն  
անցնի ի Ռօման՝ ահա յանկարծ արգելուե-  
ցանք և սափուեցանք դառնալ ի Սուշաւա-  
Այս յանկարծական արգելքին պատճառն ի-  
մանալու համար դիմեցինք Պուբլէցթի նշա-  
նաւոր ազգայնոց Եաշի, Փօքչանի, Պօմօշա-  
նի և Ռօմանի Պատ. Հոգարարձութեանց, ո-  
րոց, ինչպէս և Սուշովի Պատ. Հոգարարձու-  
թեան այս առթիւ նուիրած ջանից համար  
կը պարտիմք խորին շնորհակալութիւններ:

Հակոսակ պատռւաւ որ միջնորդութեանց  
մ.ծ եղաւ մեր յաւնն երբ լսեցինք թէ, Պոք-  
րէշթի Տէր Սախարարապետն ընդդիմացած  
է, լսելով թէ մեր մասին գեշ տեղեկութիւն-  
ներ հասած են իրեն:

Մենք մեր քանին հինգամեայ այլ և այլ  
նշանաւոր պաշտօնավորութեանց մեջ կա-  
կածելու որ և իցէ մի ընթացք երբեք չեմք  
ունեցած, չհանարար Ցեր նախարարապետի  
հասած այդ գեղ տեղեկութիւնը բացարձակ  
առդիւնք են սուտ զրպարտութեան:

Արդարեւ իրեւ ամենատարու պին աշակերտաց Քրիստոսի՝ այս ծանր նախատանաց գլուխութեան օրական խորհրդական զի ու լուէ, որպէս

համբ՝ որ ոչ բանայ զրերան իւրա սակայն վատահ եմք, թէ ծշմարտութիւն չի պիտի լռէ և ուշ կամ կանուխ պիտի յացանուի մեր անմեղութիւնը:

Եւ արդ սիրելիք իմ մտադիր լինելով մօտ ժամանակին մեկնիլ և ցաւելով որ այս անգամ չկրցայ անձամբ տեսնել զնեզ ներկայ Շրջարերականաւս կը հաղորդեմ ձեզ ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Վեհափառ և Սլրազնագոյն Կաթողիկոսի հայրուպետական ողջոյնն և օրհնութիւններն:

Եթ յորդորեմ զեեզ յանուն նորին ս. Օծութեան, որ ամեն ժամանակի աւելի հաւատրիմ մնաք Հայաստանեացս ս. Եկեղեցւոյ ամուր պահէք ձեր ազգայնութեան պատիը, որ ձեր արքանայիշատակնախահայրերէն իրեւ մի սուրբ աւանդ ձեզ յանձնարարած է, կիթէք ձեր զաւակները հայ կրօնքով և հայ հոգւով, հայ սրտով և հայ լեզուով. սիրեք զիրար, հալածելով ձեր մէջն նախանձն ու ատելութիւնն, քսու բանսարկութիւնն և այն ամեն չարիքներն, որք ընտանիքներ կը կործանն. և վերջապէս շեշտելով կը յորդորեմ, որ ձեր աւանգական պարկեշտութեամբ ժրածան գործունելութեամբ և անխախտ հաւատարմութեամբ՝ բարի և օրինակելի քաղաքացիներ հանդիսանայք, ու ինչպէս մինչեւ ցարդ նոյնապէս այսուհետեւ ալ փառաւոր պահէք հայ անունն Ռումանիոյ մէջ:

Յոյս յայտնելով որ շնորհիւ Ցեառն ի պատեհ ժամանակի դարձեալ կուզամ առ ձեզ և յայնժամ բերան ի բերան կը խօսիմ առ այժմ կը բաւականանամ նուիրել ձեզ ամենեցուն իմ սիրոյ ողջոյնս և օրհնութիւններս, պարտաելով առ Աստուած, զի զնեզ զամենեսեանդ հանգերձ ընտանեօք և պարագայիր պահէ. և պահանէ յառողջութեան և ի յաջողութեան, ի խաղաղութեան և բարօրութեան՝ այժմ և յաւիտեանս:

### ՄՆԱՄՔ ԱԼՈՒԹԱՐԱՐ ԳԵՂՋ ԵՊԻՍԿ. ԵՒՐՈԳԻԱՅ

Փետր. 25/9 մարտ 1899  
համար 46

Առ է աւ աւ Պ օ վ ի ն ա ւ

Գեր. Գեղորդ եպիսկոպոսի այն շրջարերականի մէջ յիշուած տարագրութեան առ-

թիւ ահա թէ ինչ ենք կարդում «Արևելք» թերթի մէջ թ. 3945.

Անցեալները լուր մը արտատպած էինք ֆրանսերէն Արևիքրէն, թէ ուսմանական կառավարութիւնը հայ եկեղեցական մը արտաքսերէ է իր հողէն, Այդ եկեղեցականն է եղեր Տ. Գէորգ եպիսկոպոս Խթիւ Ճեան, այցելու հոգիւ եւրոպարանակայոց, որ Հայրապետական տնօրինութեամբ կոչուած է այդ պաշտօնին, և որ վերջերս Ռումանիա այցելած էր՝ տեղույն հայ գաղթականութիւնը հոգուելու:

Պօմուշանէն Փունիի ուղղած թղթակցութիւն մը մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ այս արտաքսման պարագաներուն վրայ, որուն շարժաւ ոիթն ու թելադրիչն է եղեր քաղաքին Աթանաս քահանան, Այս տիրահոչակ տէրտէրը քանից կրօնական ժողովն ալ զրադեցուցած է իր անձահ վարժոններուն գէմ հասած գանգատներով, որոց պատճառաւ Պատրիարքարանը հարկադրուեցաւ վերջի վերջոյ գաղթեցն ել զայն պաշտօնավարութենէ; Այս անգամ, երբ Տ. Գէորգ եպիսկոպոս Պօմուշան կը հասնի, կը փորձէ համոզել Տ. Աթանասը որ պաշտօնը թողուլ, թէն տեղացի ազգայինները յանձն առած էին անոր տեղափոխութեան ժամանքին մինչև 1200 ֆրանք տալ, որպէս զի այդ փորձանքը քահանան հեռանայ իրենց քաղաքէն, Խթիւ Ճեան եպիսկոպութեան գաղթքէն, կը մեկնի Պօմուշանէն և Եաշ կերթայ, ուր մեծ պատուով կը նդունուի պատարագ կը մատուցանէ, քարոզ կը խօսի և կը յորդորէ ազգայինները, որ բանան իրենց փակուած գաղթուները, Այս միջոցին Աթանաս քահանան և իր արքանեակները գրեր ուղղած էին ուսմանական կառավարութեան կեգրուին, ի Պուրքէշ, զրպարտելով Տ. Գէորգ սրբազնը իրեւ խռովարար և այլն. Ասոր վրայ, պետական հրաման կը հասնի Եաշ պատուիրելով որ հայ եպիսկոպուր իսկոյն հեռացուի ուսմանական հողէն, Եաշի ազգայինները ապշած կը մնան. բայց ձեռքերնուն բան մը չէր գար. հրամանը կը հաղորդեն Տ. Գէորգ եպիսկոպոսին, որ կը մեկնի Ռումանիայէն և Սուչավա (Վետրիա) կողեւորի Ռումանիոյ Փաքչան, Եաշ, Ռոման և Պօմուշան քաղաքներու ազգ. հոգեթարձութիւնները՝ խորապէս յուղուած, բողոքագրեր ուղղած են ուսմանական կառավարութեան, հասկացնելու համար, թէ իրենց հոգեւոր այցելու հոգուին գէմ գրուածներ ստորամբտ զրպարտութիւններ են՝ քահանայի մը մեքենայութիւններէն առաջ եկած.